ԵԱՀԿ երևանյան գրասենյակ

ԼՈԱՏՈԼ

No. 4 Դեկտեմբեր 2011

Կարգավորիչ գիլյոտին. աջակցություն Հայաստանում կանոնակարգման բարելավմանը

«Կարգավորիչ գիլյոտին»-ը բարեփոխում է, որի շրջանակներում հաշվարկվում, վերանայվում և հեշտացվում է ազգային կարգավորիչ դաշտը (ԵԱՀԿ/Գոհար Ավագյան)

ՀՀ կառավարությունը խնդրել էր ԵԱՀԿ գրասենյակին աջակցել հանրապետության կարգավորիչ դաշտի բարեփոխման հարցում՝ երկրի տնտեսական զարգացումը խթանելու նպատակով: Ի պատասխան այս խնդրանքի՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հրավիրեց կարգավորիչ բարեփոխումների հարցում առաջատար միջազգային փորձագետի, որպեսզի գնահատի Հայաստանի կարգավորիչ միջավայրը և դրա ազդեցությունը բիզնեսի վրա: Գնահատմամբ պարզվեց, որ հնացած և հաճախ հակասական կարգերը խոչընդոտում են բիզնեսի զարգացմանը հանրապետությունում:

Այս եզրահանգումների հիման վրա ՀՀ կառավարությունը նախաձեռնեց կանոնակարգիչ դաշտի հետ կապված իրավական գործիքների համապարփակ վերանայում: Այս գործընթացը, որը հայտնի է որպես «կարգավորիչ գիլյոտին», առաջին հերթին կատարում է երկրի իրավական գործիքների գույքագրում: Այդ գործիքները այնուհետև առանձին-առանձին գնահատվում են երեք չափանիշների հիման վրա, որոնք են՝ օրինականություն, անհրաժեշտություն և նպաստավորություն տնտեսական զարգացման համար: Բացի առավել արդյունավետ կարգավորիչ դաշտ ստեղծելուց, նախատեսված բարեփոխումները կբարելավեն հանրապետության օրենսդրական բազան:

Սեպտեմբերի 17-ին ՀՀ Նախագահը տվեց գիլյոտինի գործընթացի պաշտոնական մեկնարկը: Հետևաբար նոյեմբերին մտադրությունների մասին գրություններ ստորագրվեցին դոնոր համայնքի մի շարք անդամների և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ՝ այս աշխատանքին աջակցելու նպատակով: Նախատեսվում է, որ ամբողջ գործընթացը կտևի երկու տարի:

Մարդու իրավունքները զինված ուժերում

Բանակում հանցագործությունների կանխարգելման և մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ քաղաքականություն ստեղծելու նպատակով՝ գրասենյակը սերտ համագործակցել է ՀՀ պաշտպանության նախարարության հետ բանակում մարդու իրավունքների ոտնահարմանը նպաստող գործոնները վեր հանելու ուղղությամբ և ներկայացրել առաջարկություններ: Այդ քննարկումների հիման վրա կստեղծվի օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունների փաթեթ՝ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը բարելավելու համար:

Գրասենյակը նաև աջակցել է ՀՀ ՊՆ-ին զորակոչիկների վաղ զորացրման պատճառները հայտնաբերելու հարցում: Արդյունքում՝ ՀՀ ՊՆ-ի համար պատրաստվել և տրամադրվել է օրենսդրական, ինչպես նաև վերահսկողության և կիրարկման գործընթացների բացերը բարելավելու առաջարկությունների փաթեթ: Այդ խնդիրը քննարկվել է նաև 2011թ. դեկտեմբերին ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի հետ:

Գրասենյակի նախաձեռնությամբ մեկնարկել է ծրագիր՝ ՀՀ զինված ուժերում առաջնորդության և կառավարման կարողությունների բարելավման հարցում ՀՀ ՊՆ աջակցելու համար: Ծրագրով նախատեսվում է հրատարակել դասագիրք զինված ուժերի ֆորմալ և ոչ ֆորմալ ղեկավարության մասին: Այս դասագիրքը կներառվի հիմնական զինվորական հաստատությունների ուսումնական ծրագրերում և կօգտագործվի որպես հիմք՝ սպաների 2012թ. հատուկ դասընթացի համար:

ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ կազմակերպված քննարկման թեման է զինված ուժերում մարդու իրավունքների հարցերը (ԵԱՀԿ/Գայանե Տեր-Ստեփանյան)

ԵԱՀԿ-ն սկսում է դատախազության բարեփոխումների ծրագիր Հայաստանում

2011թ. օգոստոսի 24-ին գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսը և ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը կնքեցին փոխըմբռնման հուշագիր Հայաստանում դատախազության բարեփոխումների մասին: Ըստ հուշագրի՝ ԵԱՀԿ-ն աջակցելու է ՀՀ դատախազությանը համապատասխան օրենսդրությունը և կիրառումը միջազգային նորմերին և չափանիշներին համապատասխանեցնելու հարցում: Հուշագիրը նաև նախատեսում է բարեփոխումների գործընթացի անկախ գնահատում ՀՀ գլխավոր դատախազության գործունեության առավել արդյունավետությունը և թափանցիկությունը բարձրացնելու ուղղությամբ:

«Դատախազները կարևոր դեր են խաղում արդարադատության իրականացման գործում: Հուսով ենք, որ այս նախաձեռնությունը կնպաստի քրեական արդարադատության բարեփոխումներին», - ասաց դեսպան Ս.Կապինոսը ստորագրման արարողության ժամանակ: «Ընթացիկ բարեփոխումների գնահատման արդյունքում միջազգային փորձի հիման վրա կտրամադրվեն առաջարկություններ՝ օրենսդրական դաշտի կատարելագործման համար», - ասաց պարոն Ա.Հովսեփյանը:

Դեսպան Կապինոսը /ձախից/ և Աղվան Հովսեփյանը ստորագրման արարողության ժամանակ (ԵԱՀԿ/Գոհար Ավագյան)

Քննարկվել են անչափահասների դատավարությունների դիտարկման արդյունքները

Երեխաներն ունեն ապահով միջավայրի կարիք, և ոչ միայն իշխանությունների, այլ ողջ հասարակության կողմից: Բացի կանխարգելումից, միջազգային չափորոշիչների համաձայն անհրաժեշտ է քաղաքականություն, որը կխրախուսի ազատազրկման այլընտրանքային տարբերակների կիրառում:

Նոյեմբերի 1-ին հրապարակվեց զեկույց, որը մանրամասնում էր անչափահասների ներգրավմամբ 37 դատավարությունների եզրահանգումները: Զեկույցում վերլուծվում էր ազգային օրենսդրությունն ու պրակտիկան, ինչպես նաև գերատեսչությունների միջև համագործակցությունը: Զեկույցը վեր էր հանում անչափահասների արդարադատության համակարգի բացերը և ներկայացնում բարելավման առաջարկություններ: Ծրագիրն իրականացվել էր «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից՝ ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ: Մասնակիցները քննարկեցին նաև «Անչափահասների արդարադատությունը Հայաստանում. օրենքի հետ հակասության մեջ գտնվող երեխաների հեռանկարը»:

Օրենսդրական բարեփոխումներ

Կրոնական կազմակերպությունների, Ազգային ժողովի, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների 60 ներկայացուցիչներ օգոստոսի 19-ին բանավիճում էին կրոնական ազատությունների և փոփոխությունների մասին նոր օրենքի և այլ փոփոխությունների նախագծի շուրջ: Նպատակն էր քննարկել ազգային օրենսդրության ներդաշնակեցումը կրոնի ազատության և միավորման ազատության ոլորտների միջազգային պարտավորությունների հետ:

Նոյեմբերի 15-ին գրասենյակը՝ ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ արդարադատության նախարարության և Երևանի պետական համալսարանի հետ համատեղ կազմակերպեց աշխատաժողով՝ քրեական դատավարության օրենսգրքի նոր նախագծի հետ կապված տեսական և գործնական խնդիրներին անդրադառնալու ու դրանք քննարկելու նպատակով:

Կլոր սեղանի մասնակիցները քննարկում են կրոնական ազատությունների մասին օրենսդրական նախագիծը, 2011թ օգոստոսի 19 (ԵԱՀԿ/Գոհար Ավագյան)

Մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը ԵԱՀԿ անվտանգության համապարփակ գաղափարախոսության անկյունաքարն են: ԵԱՀԿ երկրները համաձայնել են, որ տևական անվտանգությունը հնարավոր չէ առանց մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և գործուն ժողովրդավարական հաստատությունների: ԵԱՀԿ պետությունները պարտավորվել են իրականացնել մարդու իրավունքների և ժողովրդավարական նորմերի համապարփակ ծրագիրը, որը հիմք է ԵԱՀԿ-ի մարդկային ուղղության համար: Այն ներառում է պայքար թրաֆիքինգի դեմ, ժողովրդավարացում, ընտրություններ, գենդերային հավասարություն, մարդու իրավունքներ, ԶԼՄ-ների ազատություն, փոքրամասնությունների իրավունքներ, օրենքի գերակայություն և հանդուրժողականություն, խտրականության բացառում:

Մարդու իրավունքների կրթություն

Միջնակարգ դպրոցների 30 ուսուցիչներ մասնակցեցին մարդու իրավունքների թեմայով երեքշաբաթյա ինտենսիվ դասընթացների, որոնք մեկնարկեցին հուլիսի 26-ին Վանաձորում: ԵԱՀԿ-ի աջակցությամբ՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն-ի /ՀՍԻԿ/ կողմից կազմակերպված դասընթացի նպատակն էր բարձրացնել հասարակագիտության ուսուցիչների գիտելիքները և դասավանդման ունակությունները: Դասընթացին կհաջորդի մեկ տարվա հեռակա դասընթաց, որը կօգնի ուսուցիչներին ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառել:

Մարդու իրավունքների օրը

Գրասենյակի աջակցությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ՝1) կարճամետրաժ ֆիլմերի մրցույթ՝ հիմնված ՄԻ համընդհանուր հռչակագրի և ՄԻ եվրոպական կոնվենցիայի հոդվածների վրա, 2) ռոք համերգ՝ նախատեսված երիտասարդների համար, 3) ՄԻ նվիրված ցուցահանդես՝ կազմակերպված Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից և 4) ՄԻ պաշտպանի արտակարգ զեկույցը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին:

Աջակցություն մարդու իրավունքների պաշտպանի /ՄԻՊ/ գրասենյակին

Գրասենյակն աջակցել է ՀՀ ՄԻՊ գրասենյակին առընթեր խոշտանգումների կանխարգելման խորհրդին այցելություններ կատարել Հայաստանի մարզեր: Այցերի ընթացքում խորհրդի անդամները այցելել են փակ հաստատություններ, ինչպիսիք են ոստիկանության ստորաբաժանումները, քրեակատարողական հիմնարկները, հոգեբուժարանները, զորամասերը և հատուկ դպրոցը: ԵԱՀԿ նաև աջակցել է ՄԻՊ-ի կանխարգելման ազգային մեխանիզմի տարեկան զեկույցի հրատարակմանը և հնարավորություն ստեղծել հասնելու երկրի հեռավոր համայնքներ:

Ուստիկանության կրթական նոր համակարգ

ՀՀ ուստիկանության կրթական համակարգը արդիականացնելու նպատակով 2011թ. հիմնվեց եռաստիճան կրթահամալիր: Ամենաստորին աստիճանը՝ ուստիկանության ուսումնական կենտրոնը, տրամադրում է վեցամսյա նախնական ուսումնական ծրագիր կրտսեր սպայական կազմի համար, միջինը՝ ուստիկանական քոլեջը, առաջարկում է երկամյա ուսումնական ծրագիր ուստիկանության միջին խմբի աշխատակիցների համար, իսկ վերինը՝ ուստիկանության ակադեմիան, առաջարկում է ուստիկանության ղեկավարության համար բակալավրի և մագիստրոսի կոչում շնորհող ծրագրեր:

2011թ. աշնանը ուստիկանության կրթահամալիրը սկսեց ընդունելություն, որի անկողմնակալությունը ապահովելու համար հիմնվեց թեստային նոր համակարգ: Ստեղծվեց ընդունելության անկախ հանձնաժողով՝ կազմված ուստիկանության, պետական այլ մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Ուշագրավ է, որ ԵԱՀԿ-ի առաջարկությունների հիման վրա զգալիորեն ավելացավ ընդունված կին դիմորդների թիվը: Ուստիկանության քոլեջ ընդունված առաջին խմբում կանանց տոկոսը աճել է 5-ից մինչև 20-ը: Ավելին, այժմ շրջանավարտները պետք է մեկ տարի աշխատեն որպես պարեկային ուստիկաններ՝ նախքան ուստիկանության որևէ այլ ծառայության անցնելը կամ ուսումը ուստիկանության ակադեմիայում շարունակելը:

ԵԱՀԿ աջակցությամբ մշակվել և ներդրվել է նոր համակարգչային թեստային համակարգ ուստիկանությունում (ԵԱՀԿ/Գոհար Ավագյան)

Անտառային հրդեհների կառավարում և արձագանքում

Շրջակա միջավայրի և անվտանգության նախաձեռնության (ENVSEC) շրջանակներում ԵԱՀԿ-ն սեպտեմբերի 12-ից 14-ը աջակցեց Հայաստանում անտառային հրդեհների ազգային նախաձեռնության երկրորդ փուլին: Նախաձեռնությունը արդյունք է Հրդեհների վերահսկման համաշխարհային կենտրոնի կողմից իրականացված հրդեհների գնահատման, որով առաջարկվում է բարելավել անտառային հրդեհների կանխարգելման ու արձագանքման տարածաշրջանային կարողությունները Հարավային Կովկասում:

ENVSEC ծրագրի ամենավերջին փուլը Հայաստանում ներառում էր Սյունիքի հրշեջների վերապատրաստում, աջակցություն անտառային խոշոր հրդեհների համակարգված արձագանքման վարժանքի հարցում և անտառային հրդեհների կառավարման վերաբերյալ ազգային կլոր սեղանի կազմակերպում: Բոլոր այս միջոցառումները համաձայնեցվել են ՀՀ կառավարության ու ՄԱԶԾ-ի հետ:

Մոտ 50 հրշեջներ մասնակցեցին անտառային հրդեհների կառավարման թեմայով գործնական վարժանքին Սյունիքում (ԵԱՀԿ/Կարեն Արզումանյան)

Կլոր սեղան՝ հակաթրաֆիքինգային թեմայով

2010թ. ի վեր ԵԱՀԿ-ն համախմբել է ՀԿ-ներին, իրավապահ կառույցներին և պետական շահագրգիռ կողմերին՝ փորձելով բարելավել Հայաստանի հակաթրաֆիքինգային ազգային ուղղորդման մեխանիզմի արդյունավետությունը: Թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի իրականացմանն աջակցելը գրասենյակի առաջնային խնդիրներից է: Հոկտեմբերի 26-ին, ԵԱՀԿ-ն Երևանում կազմակերպեց կլոր սեղան՝ ներկայացնելու իրավապահ մարմիններին ուսուցանողների, դատախազների, դատավորների, ուստիկանների, սահմանապահների, ինչպես նաև աշխատանքի տեսուչների համար նախատեսված ուսումնական ձեռնարկը: Ի լրումն առաջարկվող մեթոդաբանության՝ ձեռնարկը ներառում է ուսումնական նյութեր թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում Հայաստանի օրենսդրական դաշտի և փորձի մասին: 2012թ. գրասենյակը նախատեսում է շարունակել դասընթացները:

Խոսքի ազատության իրավունքի պաշտպանություն

2011թ. հոկտեմբերին գրասենյակը իրավաբանների և դատավորների համար կազմակերպեց սեմինարներ խոսքի ազատության միջազգային չափանիշների վերաբերյալ: 2010թ. Հայաստանում զրպարտության և վիրավորանքի ապաքրեականացումից հետո լրատվամիջոցների և լրագրողների դեմ հարուցված դատական գործերի զգալի աճ արձանագրվեց: Սեմինարների ընթացքում քննարկվեցին զրպարտության և վիրավորանքի, անձնական տվյալների գաղտնիության, դատարանի լուսաբանման և ընտրությունների համատեքստում խոսքի ազատության կարգավորման միջազգային չափանիշները:

Դասընթացներ

Քաղաքականությամբ զբաղվող կանանց կարողությունների հզորացում

2012թ. մայիսի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին ԵԱՀԿ գրասենյակը ԺՀՄԻԳ-ի հետ համատեղ դեկտեմբերի 2-ին կազմակերպեց համաժողով՝ նվիրված «Քաղաքական կյանքում կանանց մասնակցության բարձրացմանը»: Մասնակցում էին քաղաքական կուսակցությունների առաջնորդները, շտաբի պետերը և կուսակցությունների անդամները: Կլոր սեղանին հաջորդեց երկօրյա ուսուցում կին թեկնածուների համար, որը կենտրոնացած էր արդյունավետ քարոզչության, առաջնորդական հմտությունների և հասարակայնության հետ արդյունավետ հարաբերությունների վրա:

Կրոնական հարցերի լուսաբանում

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվեց երկու եռօրյա սեմինար կրոնի կամ համոզմունքի ազատության վերաբերյալ ազգային օրենսդրության և միջազգային չափորոշիչների թեմայով: Մասնակցեցին մոտ 40 լրագրողներ և ուսանողներ:

Դասընթաց իրավապաշտպանների համար

Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած եռօրյա դասընթացի նպատակը մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքների ավելացումն ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անդամների մշտադիտարկման կարողությունների հզորացումն էր: Նախաձեռնությունը կազմակերպվել էր «Հայաստանի հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի հետ համատեղ:

Երևանի քաղաքապետարանի կարողությունների հզորացում

Որպես Երևանի քաղաքապետարանին ցուցաբերվող շարունակական աջակցության մի մաս՝ գրասենյակը նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 23-ը կազմակերպել էր 4-շաբաթյա դասընթաց: Ամեն շաբաթ ուսուցանվում էին քաղաքապետարանի 15 աշխատակիցներից բաղկացած խմբեր այնպիսի զանազան թեմաների շուրջ, ինչպիսիք են քաղաքային կառավարումը և քաղաքաշինության պլանավորումը, ներդրումային ծրագրերի մշակումն ու կառավարումը և պետական/մասնավոր գործընկերության եղանակները, ինչպես նաև հանրային ծառայությունների կառավարումը:

Զինված ուժերի /ԶՈՒ/ ժողովրդավարական վերահսկողություն

ԶՈՒ ժողովրդավարական վերահսկողության բարձրացումը երկարաժամկետ հիմնախնդիր է գրասենյակի ռազմաքաղաքական ուղղության համար, որը իրականացվում է ԵԱՀԿ հիմնարար մեխանիզմներից մեկի համատեքստում: Ընդունված լինելով 1994թ.՝ Անվտանգության ռազմաքաղաքական հիմնահարցերի ԵԱՀԿ վարքագծի կանոնագիրքը պարտավորեցնում է ԵԱՀԿ մասնակից պետություններին՝ մշակել իրենց ԶՈՒ, այդ թվում՝ ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերի, հետախուզական ծառայությունների և ոստիկանության քաղաքացիական վերահսկողության համապարփակ մեխանիզմ:

Վերջերս գրասենյակը Դրաստամատ Կանայանի անվան ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի հետ միասին ներկայացրեց հրատարակություն, որը պարունակում էր վարքագծի կանոնագրքի հոդվածներ, պատմությունն ու քաղաքական համատեքստը և կանոնագրքի իրականացման ոլորտում Հայաստանի ու այլ երկրների փորձը:

Երիտասարդությունն ընդդեմ կոռուպցիայի

ԵԱՀԿ աջակցության շրջանակներում և Կոկա-Կոլա հայաստանյան ընկերության հետ համագործակցությամբ Ուսանողական հակակոռուպցիոն աշխատանքային խումբը Facebook-ի իր էջում կազմակերպեց կարգախոսի մրցույթ: Մասնակցեցին մոտ 1500 ուսանողներ: Հաղթող կարգախոսը՝ «Գնելով կրթությունդ՝ վաճառում ես ապագադ» տպագրվել էր մի շարք գովազդային նյութերի մեջ և լայնորեն կիրառվել խմբի քարոզարշավում:

ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ գրասենյակը կազմակերպեց եռօրյա սեմինար՝ հակակոռուպցիոն գործողությունների ծրագրերի թեմայով համալսարանական պաշտոնյաների համար: Մալթայի և Սերբիայի միջազգային փորձագետները ներկայացրեցին թափանցիկությունը խթանելու և ուսանողների մասնակցությունը մեծացնելու ոլորտում իրենց փորձը:

ԵԱՀԿ մոդել համաժողով

ԵԱՀԿ մոդել համաժողովն անցկացվեց 2011թ. նոյեմբերի 18-ից 19-ը Երևանում: ԵԱՀԿ-ի Մշտական խորհրդի նմանակված նիստին հավաքվել էին մոտ 60 ուսանողներ՝ քննարկելու կիբեր սպառնալիքների վերաբերյալ հարցեր ու պատկերացում կազմելու ԵԱՀԿ-ի համապարփակ անվտանգության մոտեցման մասին:

Վկաների պաշտպանության մասին զեկույց

Վկաների պաշտպանության միջազգային չափորոշիչները, ազգային օրենսդրական դաշտը և իրավիճակը բարելավելու գործնական առաջարկությունները ներառված էին զեկույցի մեջ, որը հրապարակվեց հոկտեմբերի 18-ին Երևանում: Ուսումնասիրությունը պատրաստվել էր Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից՝ ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ: Առաջարկությունները մշակվել էին քննիչների և փաստաբանների հետ հարցազրույցների հիման վրա, ինչպես նաև համապատասխան գործերի վերլուծությունից: Այցելել են նաև Ճիրակի, Լոռու և Տավուշի մարզերի ոստիկանության բաժիններ՝ տեղում դիտարկելու վկաների պաշտպանության պահանջների պահպանումը:

Վճռաբեկ դատարանի որոշումների մեկնաբանությունները

Գրասենյակի աջակցությամբ տպագրվեց մի գիրք, որը պարունակում է ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական վերլուծություններ և ընտրված որոշումների մեկնաբանություններ: Հրատարակությունը պատրաստվել է դատավորների միության կողմից՝ վճռաբեկ դատարանի հետ համատեղ՝ որպես ներդրում ընթացիկ դատական բարեփոխումներին ու դատական անկախության ամրապնդմանը: Գիրքը պարունակում է մարդու իրավունքների խնդիրների հետ կապված առավել վիճահարույց քրեական գործերի 30 որոշումների մանրամասն վերլուծություն: Նպատակն էր կրճատել վճռաբեկ դատարանի բողոքների թիվը և նպաստել օրենքի միատեսակ կիրառմանը:

Մոտ 50 Երևանի դպրոցականներ 2011թ. նոյեմբերի 24-ին մասնակցեցին ԵԱՀԿ կազմակերպված ինտերակտիվ խաղին, որի նպատակն էր բարձրացնել մարդու իրավունքների մասին իրազեկվածությունը (ԵԱՀԿ/Ֆոտոլուր)

Միջոցառումներ/մրցույթներ

Նա/Նե լրագրողական ամենամյա մրցույթ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը՝ Բրիտանական խորհրդի, Բրիտանական դեսպանատան, ՄԱԲՀ-ի, Վորլդ Վիժընի, Երիտասարդ հայ կանանց միության հետ համատեղ հայտարարեց Նա/Նե լրագրողական աշխատանքների ամենամյա 4-րդ մրցույթը: Ամենամյա այս մրցույթը եզակի հնարավորություն է ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար ստանալ պարգև, որը նպաստում է գենդերային հարցերում լրագրության զարգացմանը Հայաստանում և խթանում է դրական օրինակ հանդիսացող կանանց դերը (լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք մեր կայքը՝ http://www.osce.org/yerevan/85096):

ԵԱՀԿ մասին

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը՝ ԵԱՀԿ-ն գործում է հանուն 56 մասնակից պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին օժանդակելու Հայաստանին ԵԱՀԿ առջև բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքների ոլորտներում ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ Սունդուկյան 64/1, հեռ. 229610/11/12, էլ. փոստ՝ yerevan-am@osce.org, կայքէջ՝ http://www.osce.org/yerevan: